ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--հուլիսի 2023 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ 29-ՐԴ ՇԵՆՔԻ №25 ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ.

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի մարտի 28-ի №Ե-378-23 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ խնդրելով ընդունել անհատական որոշում, որի համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը պատկանող՝ Երևան քաղաքի Գյուլբենկյան փողոցի 29-րդ շենքի №25 ոչ բնակելի տարածքի սպառման համակարգի (այսուհետ՝ Սպառման համակարգ)՝ էլեկտրական ցանցին միացման վճարը վերջինիս փոխարեն կվճարի «Թիվ 28 ՇՄՇ» բաց բաժնետիրական ընկերությունը,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի ապրիլի 27-ի №Ե-544-23, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2023 թվականի մայիսի 11-ի ՍՄ/ԳԽ-2/11443-2023, գրություններով հայտնել են, որ չեն առարկում Սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի

բաշխման ցանցային կանոնների 156-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Սպառման համակարգը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին միացման վճարը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փոխարեն վճարում է «Թիվ 28 ՇՄՇ» բաց բաժնետիրական ընկերությունը՝ վերջիններիս միջև կնքվելիք՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի հիման վրա՝ համաձայն հավելվածի.
   2) Սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագիրը կնքվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հայտն առձեռն ներկայացվելու դեպքում՝ անմիջապես, իսկ փոստային կապի միջոցով ներկայացվելու դեպքում՝ հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ու «Թիվ 28 ՇՄՇ» բաց բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--հուլիսի 2023թ.